ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 հոկտեմբերի 2023 թվականի N 428-Ա

«ԿԱՊԱՆԻ N 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԼՈՒՍԻՆԵ ԶԱՔԱՐՅԱՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՆԱՀԻՏ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, հիմք ընդունելով «Կապանի N 1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լուսինե Զաքարյանի դիմումը՝

ո ր ո շ ու մ եմ՝

«Կապանի N 1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լուսինե Զաքարյանի առողջական խնդիրների պատճառով՝ 2023 թվականի հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 3-ը՝ նրա անաշխատունակության մեջ գտնվելու ընթացքում, տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել նույն ՊՈԱԿ-ի ուսումնական աշխատանքի գծով տնօրենի տեղակալ Անահիտ Սիմոնյանին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2023թ. հոկտեմբերի 30
ք. Կապան

Digitally signed by GHUKASYAN ROBERT 3712800290